


ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ
ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱԼՓԻԱՐ

Նամակ կամ ուրիշ Գրութիւն
պէտք է ուղղել առ

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՓԱՐՈՍ ԼՐԱԳՐԻ
Պապար Մուրուր, ԳԱԶԻՐԷ

Direction du journal PAROS
Bazar Mourour, CAIRE Egypte



Լ Ր Ա Փ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ՉՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Եզրագրութիւն համար 30
Վեցամսեայ 50
Օս առ երկիրներ արեւելեան ծրագր 25
Վեցամսեայ 14
Քաղաքացիական ծախսեր խմբագրութեան վրայ է:

Խմբագրութեան ուղղութեամբ հաւանակ կամ այլ գրութիւն եւ չի տրուիր:

ՓԱՐՈՍ

ԻՐ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐՈՒՆ

1 Յունուար 1898

ՆՈՐ ՏԱՐԻՆ

1896-97ի սեւ կաղանդին բաղդադմամբ որ ազգային սուգի մը բոլոր դառնութիւններով անցաւ մեզի համար, 1898 տարին կը թեւակոխենք նուազ արցունքով, թէեւ տըրտմազին ու սրտատրոփ: Նոր ու սաստկագոյն աղէտներու չի պատահիր միակ միութարութիւնն է, աւաղ, որ կը մնայ մեզի վերջապէս տարուան յիշատակներէն, խաբուսիկ մը խիթարանք մը, իրաւ, բայց որուն պէտք է հաւատանք՝ գոնէ չի մասնաւոր համար վհատութեան մը որ յուսահատութեան կը տանի, — ժողովուրդներու ինչպէս անհատներու կեանքին մէջ ամենէն դէպ խորհրդատուն: Շատ սուղի նստած, արիւնով ու հալածանքով գըն ուած փորձառութիւն մը կուշաբերէ զմեզ. վիճակին գիտակցութիւն ունենալն ընկրկիլ չէ սակայն, ո՛չ ալ համբերատար ու տոկուն համակերպութիւն՝ դասալքութիւն: Անոնք որ այսպէս մեկնել կուզեն խոհեմ գրուածքներու ոգին և անկեղծ զգացումներու արտայայտումը, կը սխալին գիտակցաբար կամ տաք գլխով:

Սխալ չէ, ինչպէս մտածողներ կան, թէ ազգի մը բոլոր տարրերուն միեւնոյն գաղափար, միեւնոյն ըմբռնում, միեւնոյն ուղղութիւն ունենալն ո՛չ մէկտեղ ու ժամանակ չէ տեսնուած: Նուա՞ղ ճշմարիտ է սակայն թէ կարծիքներու տարբերութիւնը, հանրային վէճերու ձեւը, պայքարներու սաստկութիւնը՝ կործանարար և երբեմն ալ գոհնիկ վիճակ մը ստեղծելու չափ առաջ տանիլը ամենէն արգահատելի կացութիւնն է ժողովուրդի մը համար, մանաւանդ հարստահարուած ու ընկճուած ժողովուրդներուն: Ազգայնութեան ոգին, եղբայրակցութեան զգացումը, հայրենի սէրը երբ իրենց վեհութեամբ չեն սաւառնիր ամեն անոնց վրայ որ կը պոռան կամ կուռն կընդրեն, կը գործեն կամ կը գիտեն, կը գովեն կամ կը պարսաւեն, կը հեգնեն կամ

կարտասուեն, պայքարը անօգուտ կը դառնայ, աշխատանքը ամուլ և ոգեւորութիւն կարծուածը պարզապէս գձուձ կիւրք:

Այդ մաքուր խեղճներով ապրող ազգ մը, իր տառապանքներուն մէջ անգամ սփոփանք կը գտնէ ու իր քայքայմանը մէջ ինքնամիտմամբ:

Նոր տարին մեծ յոյս մը չի բերեր մեզի, բայց ո՛չ ալ յուսահատութիւն: Անմիջական ցաւերու դարման տանիլ մեր ձեռքն է. ապագան՝ ճակատագրին կամ. . . քաղաքականութեանը: Փութանք այդ ցաւերուն շուրջ. որբեր ունինք՝ լքուած, դպրոցներ ու եկեղեցիներ՝ կործանուած, գաղթականութիւններ՝ տարտնջած. կեղեքումի ու աւերումի բոլոր հետքերը, բարոյական ու նիւթական:

Ազգութիւն մը մեր զոհուած եղբայրներու և քոյրերու յիշատակին, արցունք մը անոնց համար որ կը տառապին դեռ բանտի կամ քարտի մէջ ու միեւնոյն ատեն՝ վեհանձն բարեգործութիւն կարօտներուն, պաշտպանութիւն ընտանեկաններուն, միասիրտ ու միահոգի գործունէութիւն մը վերջապէս ամենուս կողմէ և ամենուն համար, իմաստուն, հեռատես և անձնուրաց գործունէութիւն մը: Ահա ի՞նչ որ կը մնայ անոնց որ ողջ են, առողջ, ազատ ու կարող՝ նուիրել անոնց որ, հեռուէն, չա՛տ հեռուէն կը կարկառեն իրենց գողահար ձեռքը ու խեղդուկ ձայներնին հազիւ կրնան լսել ընել տալ:

Աւանդական «չնորհաւոր նոր տարի և բարի կաղանդ»-ին հետ՝ այս ներշնչումը կը մաղթենք, իրրեւ մեծագոյն նուէր Ամանորի:

ԶՐԱՀԱՊԱՏ

(ԱՐՅՈՒՆՔՈՏ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ)

Առ 2...

—Այդպէս, բեք խեղճ կը պատմեն կոր, բեք խեղճ...

—...
Կաղանդին նախորդ օրն էր. ցուրտ, սառնուտ առտու մը: Անխոնջ Գալուստ աղան օձիքները վեր, բանկային պնակին առջեւ կծկուած նստած՝ թաղեցիկ մը այսպէս կը հաղորդէր Հիսարտիպի տնանկ աղքատներուն վիճակը: Ամեն առտուան պէս՝ թաղեցիկն եկեղեցի կը եկած իր երկիւղած մոմը վառելու, շուկայ ելնելէ առաջ:

—Իրեքէն աղա, — շարունակեց բանկային պատուական մարդը, — չունէր փշփշեղով իր ձեռքերուն մէջ — եկուր մէյմը սփոնց վիճակը երթանք տեսնանք. ետքը ժողովրդի մը կեղեքութեամբ վաղը կաղանդ

է, փարձքի օրեր է աղբար. մոմն ալ ան է, եղն ալ. . .

Իրեքէն աղան հլու շարժումով մը ժամացոյցը նայեցաւ. նշան ըրաւ հեռուն ժամկոչին որ գոյ պահէ ձեռքի չանքան. ժամկոչը սրտորայ գալու, իր Ժանձր ոտնամաններուն զրոյմը փորելով ձիւնէ սաւանին վրայ:

Մեկնեցան:

* *

Քաղերին օաճմաններէն դուրս, ընդունդեան կիսաւեր պարիսպներուն մեղմադձուտ շուքին տակ ծովեզրը, աւաղին վրայ, որ ո՛ւր տէր շունի, յետին չքաւորներու տխուր կարաւան մը գացած էր իր բնակութիւնը դնել: Բնակութիւն. — տեսէ՞ր, էք անգղիական բրդեղէններու փայտէ խոշոր անտուկները որ վառելիքի տեղ կը ծառայեն միայն. եղիւք իրենց իրենց ընտանիքներն այդ պարպուած սընտուկներուն տակ պատապարբէր էին. «վարէն եկած» տուններ զոր օրհնելով ու գուրգուրանքով բերքը շարեր էին հող ծովափին վրայ:

Ձիւնին, փութին ու անձրեւին դէմ իբր միաւ միտ պաշտպանութիւն՝ թիթեղի կտորներով պատեր էին իրենց զոյգութեամբ զրախ երեսները. և կտուր խոքէն որ օրն ի րուն կը քերէ այդ եղիւքը, շուկայի անցորդները անդիտակից հեգնութեամբ մը՝ — «հ, արցունքոտ հեգնութիւն տակայն — զրեհիլները անտաններ էին այդ մերկերը. . . զրահապատ. . .

Ճմիւղ, գալարիչ թափումներն մը կը ծորէր այդ անտուկներէն. ասոնք աւելի մորմոքիչ բան միս անտուկը որ դադարն է, ուր տառապանքը ա՛լ կը դադրի գոնէ. . .

Ձիւնը կը տեղար թանձր ու խիտ, մթնոլորտը խափանելով, խեղդելով. ծովը կը փրփրար կեռուղեւոր կոպարի հեղուկի մը մէջ. ու մոխրաթոյր սառ սոււ մը էութիւնդ կը կծկէր իր յետին ծալքերուն տակ մինչեւ. . . :

Ծածկուեր մոռցուեր էին թշուառութեան այդ տուփերը ձիւնի սառ վերմակին ներքեւ: Մահու լուծիւն մը կը ճնշէր հոն, զոր հազիւ երբեմն կը ծակծկէր սուրացող շողեկաւոր մը սոյլը. — ցնձութեան ճիշդ զրօսաշրջիկին որ կը թռի կանցնի «վա. յոյս այդ եղբերքէն, բայց չի կենար հող. . .

* *

Կունձած ստինքը պարտկելով, զոր երեսային բերնէն կը քաշէր՝ կինը դարմայկոտ աչքեր բացաւ երկու բարեղէմ թաղեցիկներուն որ ներս կը մտնէին իր հիւզակէն:

«Բարեւ» արձակեց Գալուստ աղան, հաստատ ընկալաբար շեշտով մը զոր ունի բժիշկը երբ ինք. զինք անյոյս դիտող հիւանդի մը այցելէ: Խրճիթին կինը սորոմութեան հոտառութիւն մը ունեցաւ, կուրծքի ելեւէջ մը ուր յոյսի հրճուանքը կար, ու սրտի թունդը կարեկցութեան առջեւ:

Գալուստ աղան շուրջը պորտոցուց իր չակնարկը. և աչքերուն մէջ հոծ արտութիւն մը խուժեց իսկոյն. «բարեւ»-ին շեշտը ա՛լ մեռած էր հիմայ իր ցամաքած կոկորդին խորքէ:

Կինը Ֆաթուրա-պաւմա հագած էր. — համազգեստը մեր թշուառներուն. — վրայէն. . . ալա Բոմբասուռ, ժամանակին թաւիչ, ծանրազին կըրկ.

բխած և անկեղծ ըլլալու յաւակնութիւնը ունին, ինչ որ շատ հազուադէպ հանգամանք մըն է այս դարավերջի և տարեգլխու պահուն :

Մեր առաջին և ամենէն չեղած մարմանքն է ամբողջ հայութիւնը երջանիկ տեսնել ապագային մէջ նոր ոյժերով զօրացած և լաւագոյն զգացումներով ոգեւորուած , ասկէ անմիջապէս ետքը կը մարդկեմ կատարեալ ազատութիւն մեր բանտարկեալ եղբայրներուն և բարի ազատում մեր . . . ծանրաբեռնեալ քոյրերուն :

Եւ աւելի դրական ըլլալու համար՝ կը մարդկեմ որ առաջիկայ տարին բոլորուելէ առաջ մեր աշխի երիտասարդութիւնը ամուսնացած և Առաջնորդարանի համարատուութիւնը հրատարակութեան արուած ըլլան :

Մենք մեզի կը ներենք , մեր սիրելի Այվադեանին նուիրել , իբրեւ կազանդի ընծայ , ուխտագնացութեան ցուպ մը , Գուրգուր ծակալութեան քիֆք մը 126 անգամ Եաֆա երթալ գալու , և արտօնութիւն մը 6 մէթր երկայնութեամբ և 4 1/2 մէթր լայնքով օրաթերթ մը հրատարակելու որուն մէջ սանձարձակ կարենայ գրել իր քրիստոսաբոյս քրօնիկները :

Մեր աշխատակիցներու կը նուիրենք մեր ամենաշեղծ շնորհակալութիւնները և Աղեքսանդրիայ թաղականներուն ալ . . . զործէ քաշուելու իրաւունքը :

ՌԱՏԱՄԷՍ

ՕՐՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

Տեղի Գրեթիֆին Կ. Պոլսոյ թղթակիցը կը հաղորդէ յունուար 4 թուականով թէ գեապանները Դրան ծանուցադիր մը տուեր են որով Սուլթանի կառավարութեան ուշադրութիւնը կը հրաւիրեն բարենորոգումներու գործադրութեան պէտքին վրայ , որ խոստացուած էր թուրքահայերէնական պատերազմէն առաջ : Այս առթիւ Սթանսարսին թղթակիցն ալ կը հեռագրէ Բերայէ թէ Դուռը օգուտ քաղել կուզէ հայոց յեղափոխական շարժումէն զոր կարծածէ՝ բարենորոգումներն յետաձգելու պատրուակ մը ունենալու համար :

—Կ. Պոլսոյ գեապաններն համաձայնեցին թող չի տալու համար որ Կրէսէ ընդունուին այն 4500 թուրք զինուորները զորս Դուռը կուզէ իրկել հոն , ետ կանչուելիք զինուորներուն տեղ : Հանեալէն կը գրեն թէ Բանդա վարօ ծովակալը 10,000 Ֆրանք ստացել է Իտալիոյ թագաւորէն՝ կղզիին չքաւոր ընտանիքներուն բաժնելու համար , առանց կրօնի խտրութեան :

—Պէրութէն , ֆրանսական աղբիւրէ , կը հաղորդեն հետեւեալ լուրը յունուար 1 թուականով . «Կուսակալին պահանջմամբ և միջադային օրինաց համաձայն , քաղաքի ֆրանսական ընդհ. հիւպատոսը՝ Կ. Պոլսէն եկող ֆրանսական շտեմաւէ մը դուրս հանեց և օսմ : իշխանութիւններուն յանձնեց Ալի Հաֆի պէյը , պետական խորհրդոյ անդամի մը որդին , որ ամբաստանուած է թէ դրամական գործի մը վերաբերեալ թուղթեր իւրացնելով խոյս տուած էր :

—Հալաս կը հեռագրէ Կ. Պոլսէ թէ Մա-

կեդոնիոյ երեք քաղաքներու , գլխաւորաբար Մանասթըրի և Սթրումնիցիի պուլկարներուն կողմէ պահանջուած եպիսկոպոսական Պէրաթները տրուեր են՝ Սուլթանին հրամանով :

—Բուօկիէ կիմանայ թէ պալատան գաղտնի ոստիկանութեան պետ Ահմէտ ճէլալէտունին փաշա՝ Բամազանէն վերջը եգիպտոս գալու արտօնութիւն ստացեր է :

—Կ. Պոլսոյ ռուսական նոր գեապան Պ. Ջինովիէֆ իր պաշտօնին գլուխն անցեր է յունուար 3ին , այսինքն նախապէս ծանուցուած թուականէն մէկ ամիս առաջ :

ԱՂԵՔԱՆԴՐ

Աղեքսանդրիայէն մեզ կը գրեն . —«Այս կիրակի Ս. Պօղոս Պետրոս եկեղեցւոյ տօնախմբութիւնն ըլլալով , պատարագէն ետք դպրոցական հանդէս մը կատարուեցաւ եկեղեցւոյ մէջ ի յիշատակ անոր հիմնադրին՝ հանգուցեալ Պօղոս պէյ Եուսուֆի , ազգայնոց խումըն բազմութեան մը ներկայութեամբ : Երգեցողութիւններէ և աշակերտաց կողմէ արտասանութիւններէ ետք , վարժարանին տնօրէն Պ. Յ. Պէքեարեան բանաստեղծութիւն մը արտասանեց ի վեր հանելով այդ բարերարին ազգասիրական ոգին ու բարոյական նկարագիրը : Տ. Վահրամ վարդապետ փակեց հանդէսը , մարդկեմ որ Եուսուֆ պէյ իր հետեւորդներն ունենայ կարող ազգայիններէն , մանաւանդ ներկայ դժնդակ կացութեան հանդէպ» :

ՓՈՔՐԻԿ ԳԱՂՔԱԿԱՆՆԵՐՈՒՆ ԾՆՈՒՆԴԸ

Տէր Խորագիր.

Պատուական Փարոսի Էջերուն մէջ անցեալներէ երեւոյժ գթութեան հրաւերէն զգածուած , Գալատեան վարժարանի երկուս աշակերտները փափագ յայտնեցին , հակառակ իրենց քսակին նիհարութեան , մասնակցել այն գթասիրական գործին որուն համար հանգանակութիւն լացուած է լրագրոյթ խմբագրատունը , և ահա կը փութան յիշէ ձեզ իրենց բաժինը 114 1/2 դր. ողջ .

Գահիրէ , 11 դեկտ. 97

Յ. ՍԵԹԵԱՆ

Ե. Յուզակ Նուիրատուաց

Գումար Դ. ցուցակի դր. ողջ 1904	
Ա. Ա.	20
Տիար Վառլ Գալիպէն	60
Գաւառիկ Թուրքեան	60
Իգնատիոս Սարաֆեան	20
Գուր	10
Տիար Մարտիկ Գէորգոֆ	60
Գալատեան վրժինի երկուս ուսանողք	114 1/2
Գումար զր. ողջ	2248 1/2

ՏԵՂԱԿԱՆ

Եգիպտոսի ու Սուտանի անգլիական զօրաց թիւը 12,000ի պիտի բարձրացուի ի մօտոյ :

—Վիքթորիա թագուհւոյն երկրորդ որդին՝ Սաքս Գալուրի իշխանը , և Մէքլենպուրկ Շվէյնէյն մեծ դուքսը ամուսն կը կնքեն Գահիրէ կը սպասուին , քանի մը շաբաթ Հէլուան անցունելու համար :

—Այս երկուշաբթի օր Շուպրայի պատժական ոտենին ներկայացաւ Էյրաւ Էյրաւ լրագրին տնօրէն Պ. Աքէնտէր Շահինի դէմ բացուած դատը : Թէեւ ընդհ. դատախազը խիստ պատիժ մը պահանջեց , բայց դատարանը վեց ամսուան բանտարկութեան ու 2000

դրուշ տուգանքի դատապարտեց ամբաստանեալը : Ինչպէս կը յիշուի , յիշեալ արար թերթ խտրական գերդատարնին դէմ անպատշաճ հրատարակութիւններ ըրած էր :

Պ. Աքէնտէր վերաքննութեան դիմած է :

—Սիամի թագաւորին եղբայրը՝ Սօսաթի Լուանկ Վիդնայի իշխանը Եւրոպայէն եգիպտոս եկած է , իր երկիրը ուղեւորելէ առաջ :

—Սլաթին փաշա Վատի-Հալֆա հոսեր է ուր կը գտնուին տակաւին սէրտարը ու Ուինկէթ պէյ :

—Պօղոս փաշա Նուպար , անդամ եգիպտական երկաթուղիներու վարչական խորհուրդին , տեսակցութիւն մը ունեցաւ երէկ եւմուական նախարարին հետ :

—Նախարարաց խորհուրդը ինչպիսիք տեսակետով որոշած է հարկական ոսկիի իջեցնել Մուլէա-Էլ-Նէպիի և Խալիկի հանգէսներուն համար եղած ծախքը : Մինչեւ այժմ այդ գումարին կրկինը կը վճարուէր կառավարութեան կողմէն՝ տեղական այդ տօններուն հանգէսներ կատարելու համար :

—Ռուսական Սիւսոյի Վէյիֆի մարտահար , որ 9000 տակաւաշափ տարողութիւն և 32 թնդանօթ ունի , քանի մը օրէ ի վեր Աղեքսանդրիոյ նուագահանգիստը կը գտնուի :

—Ամուսն 14ին , 15ին և 16ին , երեք օր շարունակ , Էզպէթիէ պարտէզին մէջ տեղի պիտի ունենայ բուսարանական և երկրագործական ցուցահանդէս , և եղած պատրաստութիւններէն կերելի սր ուրիշ տարիներու հետ բաղդատմամբ , այս տարուան ցուցահանդէսը աւելի կարեւոր և աւելի փայլուն պիտի ըլլայ :

—Իտալական հիւպատոսարանի դատարանը անպարտ արձակեց Օրէսթէ Պիկացցի անուն խտրացին և անոր համանին մատամ Մոնչէսթինի , որոնք անցեալները Օրէլ Մատակաւարի մէջ Արճէրիայի մը սպաննած ըլլալու ամբաստանութեամբ բանտարկուած էին :

ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՓՈՒՆԴԻՊՈՍՏԱՐԱՆ ՌՈՒՍԻՈՑ

Ի ԳԱՇԻՐԷ

Ա Ձ Դ

Քաղաքային Օրինաց Կանոնագրին Ժ. հասրի Ա. մասին 1239րդ յօդուածին համեմատ , ստորագրեալ կը հրաւիրէ Գահիրէի մէջ 1897 դեկտեմբեր 11/23ին վախճանեալ , ռուսական հպատակ Պօղոս Կարապէտեանի ժառանգորդները եւ պահանջատէրերը ներկայացնել իրենց վաւերագրերը բուսական միջնե վեց ամիս : Այս պայմանաւամբ լրացաւ , որեւէ պահանջու չպիտի ընդունուի :

Ռուսական փոխ-հիւպատոս

Ա. ԻՎԱՆՈՑ

Գահիրէ 22 դեկտեմբեր 1897

3 յունվար 1898

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՐՁԱԳԱՆԳ

Գերմանացիներուն Բիաօ-Չէուի նաւահանգիստը գրաւելուն պատմութիւնը հետաքրքրական է և ցոյց կուտայ թէ միամիտ չինացիները առանց կասկածելու թէ գերման նաւատորմին նպատակը պզտիկ աշխարհակալութիւն մը ընել էր իրենց հողին վրայ , բարեկամական ցոյցերով և գրկաբաց ընդունել են զանոնք ի սկզբան :

Երբ նաւային զինուորները ցամաք ելլելով , նուագախումբերու առաջնորդութեամբ դէպ ի քաղաք յառաջացան , տեղացիները՝ այս անակնկալ տեսարանէն յափշտակուած ընդ առաջ փութացին և անոնց ընկերացան խաղաղով խնդալով : Չինացի պահապան զօրքը որ կը բաղկանալ երկու-երեք հազար հոգիէ , և այդ միջոցին զբաղած էր մարզանքներ կատարելու , կարծելով թէ օտարական

ները կուզէին իրենք ալ փորձեր կատարել, տեղ տուին անոնց: Գերմանացիները, առանց ժամանակ ձգելու որ իրենց թշնամական նշագատակը իմացուի, իսկոյն գրաւեցին Քիւսօ-Չէուի կարեւոր դիրքերը:

Չինացի հրամանատարը, գերմանացի ծովակալին առջեւ տարուելուն, գունաթափ մնաց երբ լսեց Վիլհելմ Բ-ի հրամանգիրը զոր թարգման մը կարդաց: Այն ատեն առաջարկեցին իրեն՝ կամ իր մարդիկներով հեռանալ ամրոցներէն և կամ պատերազմիլ գերմանական վիթխարի թնդանօթներուն դէմ: Վարանելու միջոց չի կար. խեղճ մարդը վար առաւ իր դրօշակը և հրամայեց իր սպաներուն ու զօրքերուն՝ թողուլ քաղաքը: Ասոնք, անօթի ծարաւ, թեւերնուն տակ ծրար մը առած, ու նոյն իսկ գերմանացիներուն կարեկցութիւնը շարժող վիճակի մը մէջ ճամբայ ելան գլխիկոր:

—Մատրիտի թերթերուն մէջ հրատարակուած վիճակագրի մը նայելով, Գուալայի ապստամբութեան ծագելէն ի վեր սպանիական կառավարութիւնն այդ կղզին զրկեր է 185,267 զօրք. նոյնպէս 28,774 զօրք Ֆիլիբեան կղզիները և 3048՝ ի Բօրթօ-Ռիքօ:

—Աւստրիոյ կայսրը իր յորէլեանին առթիւ Պապին նուիրեր է ոսկի արկղիկ մը որ կը պարունակէր 30,000 ֆիօրին:

—Ֆրանսական մամուլը կը հերքէ Լոնտոնի թերթերուն տուած այն լուր թէ Անգլիոյ և Ճարմանի միջեւ դաշնակցութիւն մը կնքուած ըլլայ, Չինաստանի դէպքերուն հետեւանօք:

—Անցեալ շաբթու Պէրլինի մէջ ելած լուր մը թէ Պիլմարք իշխանը մեռեր է, մեծ յուզում պատճառներ է: Լուրը սխալ էր բուրրովին. Գերմանիոյ նախկին նախարարապետին առողջական վիճակը նոյնն է. յօդացաւ և կը տառապի. բժիշկներն արգիլած են իրեն՝ դուրս ելլել կամ այցելութիւն ընդունիլ:

—Բարիզէ կը հեռագրեն թէ Տրէյֆիւսի դատին ժամանակ պատրաստուած ամբաստանագիրն հրատարակութեան տրուեր է: Այդ պաշտօնագրէն կերելի թէ նախկին հարկաւրապետին դատապարտութիւնը հիմնուած էր տեղեկագրի մը վրայ որուն համար երեք մասնագէտներ յայտարարած էին թէ Տրէյֆիւսի գրածն է, իսկ ուրիշ երկուք հակառակը կը պնդէին: Հիմա կը կարծուի թէ այդ գրութեան բուն հեղինակը Էմիլ Էրազմի հրամանատարն էր:

ՖՈԹՕԿՐԱՖԻ ԷԺԻԲՍԻԷՆ

Ք. ՊԵՒԻՔՄԷՃԵԱՆ

ՇԱՐԱ ՄՈՒՀԱՄՄԵՏ-ԱԼԻ ԹԻԻ 120

Արհեստին վերջին կատարելագործութեան համեմատ հաստատուած այս լուսանկարչատան մէջ ամեն տեսակ լուսանկարներ կը հանուին գոհացուցիչ գիներով:

Ամեն մեծութեան ԱԿՐԱՆՏԻՍԸՄԱՆՆԵՐ:

1—10

Le Gérant: Dr. A. S. HAGOPIAN
Տպագրութիւն ՓԱՐՈՍ Երազմի

PASCHAL & C^{IE}

G. G. MEIMARACHIS & C^{IE}
SUCCESEURS

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ՆՈՐԱԶԵԻՈՒԹԵԱՆՑ
ԵԳԻՊՏՈՍԻ ԱՄԵՆԷՆ ԸՆԴԱՐՁԱԿԸ

ԲԱՍՏՐԱԼ ԵՒ ԸՆԿ.

Գ. Ճ. ՄԷՅՄԱՐԱՔԻ ԵՒ ԸՆԿ., ՅԱԶՈՐԴԲ
ԳԱՀԻՐԷ ԷՕԶՊԷՔԻԷ ԳԱՀԻՐԷ

Չմեռնային նորաձեւութեան մետաքսեղէններու, բրդեղէններու և այլ այս կարգի ապրանքային մեծ և բազմատեսակ վաճառում: Բարիզեան վերջին ճաշակով պատրաստուած գլխարկներու յատուկ վաճառարան և մօտիսներու վերաբերեալ նիւթեր:

Ն Ո Ր Ժ Ի Ի Ղ

Անգլիական և ֆրանսական ասուեղէններու ինչպէս գերձակներու վերաբերող ապրանքներ:

ԲՐԻՍԹՕՅԼԻ ԱՐԾԱԹԵՂԷՆՔ

Մեծ մթերանոց սեղանի սպասներու և խոհանոցի առարկաներու:

ԱՊՐԱՆՔՆԵՐԸ ՏՈՒՆԵՐԸ ԿԸ ՅԱՆՉՆՈՒՆ

Մեծաքանակ գնողներու մասնաւոր զեղչ
8—10

ԳԱՐԹԱԼԻ ԸՆՏԻՐ ԳԻՆԻ

Պոլսէն յափառու բերել տուած այս սեղանի համար անառաք գինին կը ծախուի Նուսուր Պօլսու, Եանի խանութը ի Պազար Մուրուր քիւ 42. Գանիւրէ ուր կը գտնուի նաեւ գուտ և պատուական օղի:
16—16

ԼՈՒԱՑԱՐԱՐ ԵՒ ԱՐԴՈՒԿԻԶ

Մ. ՏԵՐ ՍԱՀԱԿԵԱՆ

ԺԱՌՏԷՆ ՌՕՍԷԹԻ, ՇՐԱՆՏ ԱԶԱՏԵԱՆԻ ՆԱԽԿԻՆ ԽԱՆՈՒԹԸ

ԿԸ ԼՈՒԱՑ ամեն տեսակ ճերմակեղէններու հագուստներ. ԿԱՐԴԻԷ արանց և կանանց շապիկներ, շրջագրեւորներ, ևն. մաքրութիւն, ճշգրտագործութիւն, և խիստ չափաւոր գին:
12—24

Տ Պ Ա Ր Ա Ն

“ՓԱՐՈՍ” ԼՐԱԳՐԻ

Կ Ը Տ Պ Ա Գ Ր Ո Ւ Ի Ն

ԱՄԵՆ ԼԵԶՈՒԷ ՇՐՁԱՐԵՐԱԿԱՆ

ՄԱՀԱԶԻ, ՀՐԱԻՐԱԳԻՐ, ԱՅՅԱԲԱՐՏ

ՑԱՆԿԵՐ, ՏԵՂԵԿԱԳՐԵՐ

ՀԱՇՈՒԵՑՈՒՑԱԿ, ՆԱՄԱԿԱԳՐՈՒԽ

Տ Ո Մ Ս Ե Ր

Եզրկտրոսի որ և է քաղաքէ կամ գիւղէ եկած յանձնարարութիւնները ամենայն խնամօք և փութով կը կատարուին:

ՎԱՅՐԿԵՆԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Այցնեւորներու և տնտեսներու

Տպարանը բաց է ամեն օր բացի կիրակի և օգն օրերէ, առաւօտեան ժամ 7էն երեկոյեան ժամ 7:

PHARMACIE DE LA POSTE

ԴԵՂԱՐԱՆ Ե. ԱԻԱԳԵԱՆ

ԳԱՀԻՐԷ, ՓՕՍԹԱՅԻ ՇՐԱՊԱՐԱԿ. ՄԱՏԱԹԱՅԻ ԱՊՐԱՆՔԻՆ ՏԱԿ

Այս նորահաստատ դեղարանին մէջ յաճախողները պիտի գտնեն եւրոպական լաւագոյն դործարաններէն բերուած թարմ դեղեր, չափաւոր գիներով: Դեղագիրները ամենայն խնամօք և ուշադրութեամբ կը պատրաստուին:

Անգլիական և ֆրանսական սքեսիալիքներ: Թարմ համալայն ջուրեր, անուշահոտ քիւնք եւն. բնաղւածական և մանրադիտական քննութիւնք: Դեղարանս կը յաճախեն հայ և օտարազգի ծառայող բժիշկներ:

Բժշկական ձրի խորհրդածութիւնք աղքատաց համար:
18—50

Ս. ԹԵԼԵԱՆ ԵՒ ԸՆԿ.

ՎԱՃԱՌԱԿԱՆ-ԴԵՐՁԱԿ

ԱՂԵԲԱՆԴԻՐԱ, Յ ԹԵԼԻՖԻԳ փառա փողոց

ՇԱԼՈՒՆ ՎԱՃԱՌԱՏԱՆ ԴԵՄ

Կերպաներու զանազանութեամբ ու ընտրութեամբ և ձեւի ու ճաշակի կատարելութեամբ այս տան դիմող յաճախորդները գոհ պիտի մնան թէ պատրաստուած հագուստներէն և թէ գիններու չափաւորութենէն:
Դիւրամատչելի պայմաններ
4—4


Ա. ԼԷԹՈՒԱԼ

Կ. Պոլսոյ մէջ հանրածանօթ ՊՈՍԹՈՐ վաճառատունէն Տեաքը Յովակիմեան Երարար այս անգամ հաստատուած են ի Գահրէ և Մուսթի փողոցը՝ Լաթէսի գոհարավաճառատան դիմաց բացած են վաճառատուն մը ուր կը ծախուին բրդեղէն և բամբակեղէն ֆանելայ, գուլպայ և դանդաղան տեսակ ընտիր շապիկներ, օձիքներ, քեւնոցներ:

Ճիշտ դանդաղանութիւն մարօֆերի, հոսեղեցներու և արդու զարդի վերաբերեալ ամեն տեսակ ապրանք: Շեֆիլդի հաշակաւոր սրբորատեայ գործիներ, ամելի, մկրաս, գանել ևն:

ԱՊՐԱՆԱՑ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ և ԱՆՄՐՅԵԼԻ ԳԻՆԵՐ:

Գաւառներէն եկած յանձնարարութիւնք ճշգրի և փութով կը կատարուին:
15—24



ՃԵՐՄԱԿԵՂԷՆ ԵՒ ԱՅԼՆ ԼՈՒԱԼՈՒ շԱՄԱՐ
Գ Ո Ր Ծ Ա Ե Ե Ց Ի Բ

ԼԵՍՍԻՎ ՏԻԻ ԺԵՆԻՆ

Ծախիք եւ ժամանակի խնայողութիւն. — Մաքրութեան կաւարկագործութիւն. — Արագութիւն եւ դիւրութիւն. — Ճերմակեղէններու եւ այլոց հակաճնխում:

ԿԱՐԵԻՐ. ԼԵՍՍԻՎ ՏԻԻ ԺԵՆԻՆ ԶԻ ՄԱՇԵՑՆԵՐ

Եւրոպիոյ եւ Ամերիկայի մէջ 100,000,000 ֆրիօ տարեկան սպառում. — Դորձածութեան կերպը խիստ դիւրին՝ իւրաքանչիւր բաժնի վրայ կը գտնուի:

Միակ ներկայացուցիչ յեղիպոս

Կ. Վ. ԵԿԱԻԵԱՆ ԵՒ ԸՆԿ

Գանիւրէ. ՊԱԶԱՐ ՄՈՒՐՈՒՐ 24—